

ՈՐԹԱՏՆԿՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԱՅԳՈՒՄ

«Ծաղկեսցէ իբրև զորթ յիշատակ նոցա»
(ՈՎՍԷԷ, ԺԳ 8)

Մարտի 11-ին, ուրբաթ, պատմական օր է Մայր Աթոռի համար։

Երեք հարյուր տարի առաջ, 1666 թվականի մարտի 11-ին, Մայր Աթոռի միաբան Ոսկան վարդապետ Երևանցին Ամստերդամում սկսեց տպագրությունը Աստվածաշնչի հայերեն առաջին հրատարակության։

1966 թվականի մարտի 11-ին Մայր Աթոռում Հայոց Հայրապետն ստորագրեց Իր սրբատառ կոնդակը, հրահանգելով հիշարժան այդ տարեթիվը նշել արժանավայել հանդիսությամբ։

Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակին նվիրված մշակութային այլ միջոցառումների կարգին, մարտի 11-ին, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, հանդիսավոր իրադրության մեջ, ի հիշատակ երջանկահիշատակ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի և Ոսկան վարդապետ Երևանցու, Վեհարանի պարտեզում կատարեց նոր այգիների արմատակալներ տնկելու արարողությունը։

Նորին Ս. Օծությունը, Մայր Աթոռի միաբանության ընկերակցությամբ, առաջնորդվում է Վեհարանի պարտեզի հյուսիսային կողմը, Խրիմյան թանգարանի կողքը, ուր խաղողի մշակության համար հատկացված են մեծ տարածությամբ վանդակներ։

Այս առթիվ, Երևանի այգեգործական ինստիտուտը Վեհարանի այգու համար ուղարկել է Հայաստանի խաղողի 21 լավագույն տեսակների արմատակալներ, որոնք ստացվել են ինստիտուտի դիրեկտոր, դոկտ.-պրոֆ. Ս. Պողոսյանի ջանքերով, և որն անձամբ հսկել է աշխատանքների վրա, Մայր Աթոռի այգում, տեսակավորելով որթերը և նշելով նրանց հերթականությունը հողամասերում։

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ կատարվում է առաջին որթատնկումը այգու առաջին հողամասում։ Դա «Զվարթնոց» խաղողի տեսակն է։ «Այգիս ցանկալիս տնկեսջիք» *(Ամովս Բ 11)։*

Այնուհետև, կատարվում է հետևյալ տեսակի արմատակալների գցումը.

1-ին հողամաս

(20-ական արմատակալ)

1-ին շարք, «Զվարթնոց», վարդագույն։
2-րդ շարք, «Սևան», սպիտակ։
3-րդ շարք, «Վարդագույն», թայֆի։
4-րդ շարք, «Կարմիր», կախանի։
5-րդ շարք, «Պարկենտ», կարմիր։

2-րդ հողամաս

(20-ական արմատակալ)

1-ին շարք, «Անի», սև։
2-րդ շարք, «Գեղարդ», կարմիր։
3-րդ շարք, «Մասիս», սև։
4-րդ շարք, «Համբերդ», սպիտակ։
5-րդ շարք, «Կարմրենի», կարմիր։

6-րդ շարք, «Շահումյանի», սպիտակ։
7-րդ շարք, համար 720/19, սև։
8-րդ շարք, «Վաղարշապատի», սպիտակ։
9-րդ շարք, «Մուսկատ», Ալեքսանդրի։
10-րդ շարք, «Սհարի», կարմիր։

3-րդ հողամաս

1-ին շարք, «Արմենիա», սև (20 արմատակալ)։

2-րդ շարք, «Արաքսենի», սպիտակ (15 արմատակալ)։

3-րդ շարք, «Հրուշակ», սպիտակ (20 արմատակալ)։

4-րդ շարք, «Վաղենի», սպիտակ (15 արմատակալ)։

5-րդ շարք, «Մուսկատ Սուսաննա», սպիտակ (15 արմատակալ)։

6-րդ շարք, «Սաթենի» (15 արմատակալ)։

Արմատակալների տնկման աշխատանքները ղեկավարում են Երևանի այգեգործական-պտղաբուծական ինստիտուտի հմուտ այգեգործ Ա. Սարգսյանը և Մայր Աթոռի գյուղատնտես Վ. Փարսադանյանը։

«Այգի Տեառն զորութեանց» (Եսայի Ե 7)։

Գեղեցիկ են նաև Վեհարանի ծաղկանոցները, որոնք մշտապես վայելում են Վեհամոր մասնավոր հոգածությունն ու խնամքը և զարդարում Վեհարանի պարտեզները մինչև ուշ աշնան օրերը։

Հարավ-արևմտյան ծաղկանոցների մեջ կառուցվում է Վեհարանի նոր տաղավարը։

Մշտադալար են Վեհարանի մուտքի առաջ, հյուսիսային և հարավային կողմերում տարածված մարգախոտապատերը (գազոններ), որոնք երիզված են կանաչ դուլաներով։

Վեհարան տանող ճանապարհին, երկու մայթերի կողքերին, տնկվեցին նոնենիներ։

Վեհարանի հարավ-արևմուտքում և հյուսիս-արևմտյան կողմում գտնվող տարածությունների վրա տնկվեցին մրգատու ծառեր (ծիրան, դեղձ, տանձ, խնձոր)։

Վեհարանի հյուսիս-արևմտյան մասում, ընդարձակ մի տարածություն, հատկացվել է անտառածառերին, որոնց թվում փշատերև և սաղարթավոր ծառատեսակներ։ Հյուսիսային կողմում բարդիներն են և գեղազարդող այլ ծառատեսակներ, զարաղաջ (պատվաստ) ծառեր։

Կանցնեն մի քանի տարիներ և «որթք մեր ծաղկեալք տան զհոտս իրեանց» (Երգ երգոց Բ 9) և «բերեն զպտուղս» (Եղեկ. ԺԷ 8)։

«Մեռելներուս իբրև խաչ ես այս ծառը տնկեցի»։